

# ՍԱՂՄՈՍ 44

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Նախկին փրկու- թյունը և ներկայիս նեղությունները	Ներկայիս անար- գության մեջ փրկու- թյան հիշողություն	Ազգի թշնամիներից ազատվելու համար աղոթք	Պաշտպանության աղոթք	Ազգային ողբ
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին: Կորիսի որդիների երգը՝ Մասչիլ				
44:1-3	44:1-3	44:1-3	44:1-3	44:1-2ա 44:2բ-3
44:4-8	44:4-8	44:4-8	44:4-8	44:4-5 44:6-8
44:9-16	44:9-16	44:9-12 44:13-16	44:9-12 44:13-16	44:9-10 44:11-12 44:13-14 44:15-16
44:17-19	44:17-19	44:17-19	44:17-19	44:17-19
44:20-26	44:20-22 44:23-26	44:20-22 44:23-26	44:20-22 44:23-24 44:25-26	44:20-22 44:23-24 44:25-26

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

*ԼՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Բացման պարբերությունները հակադրություն են մարդկային ծրագրերի և ջանքերի ձախողման ու ՅԱՀՎԵԻ ազդեցիկ և նպատակային ծրագրերի միջև:

Բ. Ինչ-որ առումով այս Սաղմոսը նման է՝

ա. 2 Օրինաց 32-ին

բ. Նեեմիա 9-ին

գ. Սաղմոս 78-ին

որոնք Իսրայելի անհավատության և ՅԱՀՎԵԻ հավատարմության պատմությունն են առաջին տարիներում (եղբ, անապատ, նվաճում, դատավորներ):

Գ. Այս Սաղմոսը հաստատ գրվել է Իսրայելի գերությունից հետո: Այն կենտրոնանում է ազգային և ոչ թե անհատականի վրա:

Դ. Պետք է նորից և նորից ասել, որ ՅԱՀՎԵՆ ունի հավիտենական փրկագործության նպատակ: Խնդրում եմ նայեք՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉՈՒ ԵՆ ՀԿ-ՅԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԹՎՈՒՄ ԱՅԴՔԱՆ ՏԱՐԲԵՐ ՆԿ-ՅԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 44:1-3**

**<sup>1</sup>Ո՛վ Աստված, մեր ականջներով լսեցինք,**

**Մեր հայրերը մեզ պատմեցին,**

**Թե ինչ գործ ես արել նրանց օրերում՝ հին ժամանակներում:**

**<sup>2</sup>Ինչպես Դու Քո ձեռքով քշեցիր հեթանոսներին**

**Եվ նրանց տնկեցիր. ինչպես նեղության մատնեցիր ժողովուրդներին**

**Ու վտարեցիր նրանց:**

**<sup>3</sup>Քանի որ նրանք ոչ թե իրենց սրով ժառանգեցին երկիրը.**

**Ոչ էլ իրենց բազուկն էր, որ փրկեց նրանց,**

**Այլ Քո աջ ձեռքն ու բազուկը և Քո երեսի լույսը՝**

**Քանի որ բարեհաճ եղար նրանց նկատմամբ:**

**44:1-3** Այս պարբերությունը շարադրում է (ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐ, տես՝ 2 Օր. 32:7) ՅԱՀՎԵԻ բոլոր գործերը Իսրայելի համար, որոնք տեղի են ունեցել Հեսուի նվաճման ժամանակ: Այս նվաճումը իրականացրեց Ծննդ. 15:12-21-ի խոստումը: Նկատեք, որ Ծննդոցի հատվածը շեշտադրում է ՅԱՀՎԵԻ դերը (այսինքն՝ սուրբ պատերազմ) խոստման մեջ: ՅԱՀՎԵՆ գործում էր, Աբրահամը քնած էր: Նվաճումը ՅԱՀՎԵԻ հաղթանակն էր, ոչ թե իսրայելացիների ռազմական ուժի (Սաղմ. 44:3):

**44:1 «լսեցինք»** Հրեական ամենամյա տոները առիթ էին նոր սերունդներին խրատելու Աստծո փրկող գործերի մասին (տես՝ Ելից 12, 2 Օրինաց 6:20-25, նկատեք պարբերաբար կրկնվող արտահայտությունը, «երբ ձեր զավակները հարցնեն. . . », տես՝ Ելից 12:26, 27, 13:14-15, 2 Օր. 6:20-25, Հեսու 4:6-7, 21-24): Յուրաքանչյուր սերնդի հավատացյալների պատասխանատվությունն է նոր սերնդին խրատել Աստծո, Նրա բնավորության և փրկագործությունների մասին պատմություններով:

**44:2 «հեթանոսներին . . . ժողովուրդներին»** Սա վերաբերում է Քանանի տեղի ցեղերին»

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՂԵՍՏԻՆԻ ՆԱԽԱԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ**  
**SPECIAL TOPIC: THE PRE-ISRAELITE INHABITANTS OF PALESTINE**

Ա. Գոյություն ունի ժողովուրդների մի քանի ցանկ:

1. Ծննդոց 15:19-21 (10)

- |                 |                |                 |                 |
|-----------------|----------------|-----------------|-----------------|
| ա. Կենեցիներ    | դ. Բետացիներ   | է. Ամորիացիներ  | ժ. Հերուսացիներ |
| բ. Կենեզացիներ  | ե. Փերեզացիներ | ը. Քանանացիներ  |                 |
| գ. Կեղմոնացիներ | զ. Ռափայիմներ  | թ. Գերզեսացիներ |                 |

2. Ելից 3:17 (6)

- |                |              |                 |
|----------------|--------------|-----------------|
| ա. Քանանացիներ | բ. Բետացիներ | գ. Ամորիացիներ  |
| դ. Փերեզացիներ | ե. Իսլացիներ | զ. Հերուսացիներ |

3. Ելից 23:28 (3)

- ա. Իսլացիներ
- բ. Քանանացիներ
- գ. Բետացիներ

4. 2 Օրինաց 7:1 (7)

- |                 |                |                 |
|-----------------|----------------|-----------------|
| ա. Բետացիներ    | դ. Քանանացիներ | է. Հերուսացիներ |
| բ. Գերզեսացիներ | ե. Փերեզացիներ |                 |
| գ. Ամորիացիներ  | զ. Իսլացիներ   |                 |

5. Հեսու 24:11 (7)

- |                |                 |                 |
|----------------|-----------------|-----------------|
| ա. Ամորիացիներ | դ. Բետացիներ    | է. Հերուսացիներ |
| բ. Փերեզացիներ | ե. Գերզեսացիներ |                 |
| գ. Քանանացիներ | զ. Իսլացիներ    |                 |

Բ. Անունների ծագումը անհայտ է պատմական փաստերի սղության պատճառով: Ծննդոց 10:15-19 իր մեջ ներառում է դրանցից մի քանիսին, որոնք կապ ունեն Քամի որդի Քանանի հետ:

Գ. Համառոտ նկարագրություններ Ծննդոց 15:19-21 ամենաերկար ցանկից՝

1. Կենեցիներ

- BDB 884
- իսրայելացի չէին
- անունները կապ ունեին «դարբնի» հետ, որը հնարավոր է վերաբերում էր մետաղագործությանը կամ երաժշտությանը (տես՝ Ծննդ. 4:19-22)
- կապ ունի Քեբրոնի հյուսիսում Սինայի տարածքի հետ
- անունը կապված է Մովսեսի աներոջ՝ Հոթորի հետ (տես՝ Դատ. 1:16, 4:11)

2. Կենեզացիներ

- BDB 889
- հրեաների բարեկամ
- Եղովմի մի ցեղ (տես՝ Ծննդ. 15:19)
- ապրում էին Նեգովրում
- հավանաբար միաջուլվեցին Հուդայի հետ (տես՝ Թվոց 32:12, Հեսու 14:6,14)

3. Կեղմոնացիներ

- BDB 870 II
- իսրայելացի չէին, հավանաբար Իսմայելի սերնդից (տես՝ Ծննդ. 25:15)
- անունը կապ ունի «արևելքի» բառի հետ
- ապրում էին Նեգովրում

- 4. Քետացիներ
  - հավանաբար կապված էին «արևելքի մարդկանց հետ» (տես՝ Հոբ 1:3)
  - BDB 366
  - իսրայելացի չէին
  - Քետի սերունդները
  - Անատոլիայի թագավորությունից էին (Փոքր Ասիա, Թուրքիա)
  - շատ վաղուց ապրում էին Քանանում (տես՝ Ծննդ. 23, Հեսու 11:3)
- 5. Փերեզացիներ
  - BDB 827
  - իսրայելացի չէին, հավանաբար Խուրիացիներ
  - ապրում էին Հուդայի տարածքի անտառներում (տես՝ Ծննդ. 34:30, Դատ. 1:4, 16:10)
- 6. Ռափայիմներ
  - BDB 952
  - իսրայելացի չէին, հավանաբար հսկաներ էին (տես՝ Ծննդ. 14:5, Թվոց 33:33, 2 Օրինաց 2:10-11, 20)
  - ապրում էին Հորդանանի արևելյան ափին (տես՝ Ծննդ. 15:20, Հեսու 12:4, 13:12, 2 Օր. 2:8-11, 20, 3:13) կամ արևմտյան ափին (տես՝ Հեսու 15:8, 17:15, 2 Թագ. 5:18, 22, 23:13, 1 Մնաց. 20:4)
  - ռազմիկների կամ հերոսների տոհմ
- 7. Ամորիացիներ
  - BDB 57
  - հյուսիս-արևմտյան սեմական մարդկանց խումբ Քամից (տես՝ Ծննդ. 10:16)
  - դարձավ Քանանի բնակիչների համար ընդհանուր անվանում (տես՝ Ծննդ. 15:16, 2 Օր. 1:7, Հեսու 10:5, 24:15, 2 Թագ. 21:2)
  - հավանական է անունը նշանակում է «արևմուտք»
  - ISBE հատոր 1, էջ՝ 119, ասում է, որ տերմինը մատնանշում է՝
    - ա. ընդհանրապես Պաղեստինի բնակիչներին
    - բ. լեռնաբնակ բնակչությանը, ի հակադրություն առափնյա հարթավայրերի
    - գ. իրենց սեփական թագավորով հատուկ ցեղ էր
- 8. Քանանացիներ
  - BDB 489
  - Քամից (տես՝ Ծննդ. 10:15)
  - Հորդանանի արևմտյան Քանանում ապրող բոլոր ցեղերի ընդհանուր անվանումը
  - Քանան անվանման նշանակությունը անհայտ է, հավանաբար «առևտրական» կամ «կարմրամանուշակագույն ներկ»
  - որպես մարդկանց խումբ նրանք ապրում էին առափնյա հարթավայրի երկայնքով (տես՝ Թվոց 13:29)
- 9. Գերգեսացիներ
  - BDB 173
  - Քամից (տես՝ Ծննդ. 10:16) կամ առնվազն «Քանանի մի որդուց» /այսինքն՝ երկիրը/, ISBE, հատոր 2, էջ՝ 1232
- 10. Հերուսացիներ
  - BDB 101
  - Քամից (տես՝ Ծննդ. 10:16)
  - Հերուս/Մաղեմ/Երուսաղեմ քաղաքից (տես՝ Հեսու 15:63, Դատ. 19:10)
  - Եզեկ. 16:3, 45 պնդում է, որ նրանք Ամորիացիների և Քետացիների խառնուրդ ազգ էին
- 11. Խևացիներ
  - BDB 295

- Քամից (տես՝ Ծննդ. 10:17)
- LXX-ը թարգմանում է որպես Քոռեցիներ (տես՝ Ծննդ. 34:2, 36:20-30, Հեսու 9:7)
- հավանաբար երբայերեն «քարանձավ» բառից է, հետևաբար քարանձավաբնակներ էին
- նրանք ապրում էին Լիբանանի լեռներում (տես՝ Հեսու 11:3, Դատ. 3:3): 2 Թագ. 24:7-ում նրանք թվարկվում են Տիվրոսի և Սիդոնի շարքում:

❖ **«նրանց տնկեցիր»** Համատեքստում սա կրկին վերաբերում է Քանանի ցեղերին (տես՝ LXX): ՀԿ-ը ՅԱՀՎԵԻՆ ղիտարկում էր որպես բոլոր մարդկային խմբերի ստեղծողը՝ հաստատողը (տես՝ 2 Օր. 32:8): Ծննդոց 15:12-21 պնդում է, որ Քանանի բնակիչները վտարվեցին իրենց մեղքերի պատճառով. երբ Իսրայելը մեղք գործի՝ նա էլ պետք է վտարվի (տես՝ Սաղմոս 78):

TEV, REV, NET Աստվածաշնչերը ենթադրում են, որ Սաղմ. 43:2 կապված է՝

1. քանանացի ժողովրդի հետ, Սաղմ. 44:2ա, գ
2. Հեսու իշխանության տակ գտնվող իսրայելացիներին, Սաղմ. 44:2բ,դ (տես՝ Ելից 15:17, Երեմ. 45:4)

**44:3** Սա Իսրայելի գործը չէր, այլ ՅԱՀՎԵԻ գործությունը Իր նպատակները իրականացնելու համար, որ թույլ տվեց Իսրայելին հեռանալու Եգիպտոսից, ճամփորդելու դեպի Քանան, և հեռացնելու տեղի ցեղերին:

Ուշադրություն դարձրեք գուգահեռներին, որոնք դրված են հետևյալի միջև՝

1. Քո աջ ձեռքը
2. Քո բազուկը
3. Քո ներկայության լույսը

Կես 3-ը վերաբերում է *Shekhinah* Անապատում դեգերելու տարիներին Փառքի Ամային:

❖ **«բարեհաճ եղար նրանց»** Սա Աբրահամին տրված ՅԱՀՎԵԻ խոստման նպատակն է:

1. սերմ (այսինքն՝ սերունդներ)
2. երկիր
  - ա. Աբրահամ՝ Ծննդ. 12:7, 13:15, 15:18
  - բ. Իսրայել՝ Ծննդ. 26:3
  - գ. Հակոբ՝ Ծննդ. 28:13

«Բարեհաճ եղավ» ԲԱՅԸ (BDB 953, KB 1280, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) արտահայտում է ուխտի նպատակ (տես՝ Ծննդ. 12:3) բոլոր ժողովուրդներին Իրեն բերելու համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ): ՅԱՀՎԵՆ ընտրեց օգտագործել Աբրահամին և նրա սերմը (տես՝ 2 Օր. 4:37, 7:7-8, 10:15) ձեռք մեկնելու Ադամի բոլոր որդիներին և դուստրերին:

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 44:4-8**

- <sup>4</sup>Դու ես իմ թագավորը, ո՛վ Աստված,  
 Հակոբի համար ազատագրումներ հրամայի՛ր:  
<sup>5</sup>Քեզանով ենք գետնին տապալելու մեր թշնամիներին,  
 Քո անունով ոտնատակ ենք տալու մեր դեմ բարձրացողներին:  
<sup>6</sup>Քանի որ իմ աղեղի վրա հույս չեմ դնում,  
 Ու սուրս ինձ չի կարող ինձ ազատել,  
<sup>7</sup>Այլ Դու փրկեցիր մեզ մեր թշնամիներից  
 Ու մեզ առողներին ամոթահար արեցիր:  
<sup>8</sup>Ամեն օր Աստծով ենք պարծենում  
 Ու հավիտյան փառաբանելու ենք Քո անունը: Սեյա:

**44:4-8** Եթե առաջին պարբերության մեջ գերակշռում են ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԸ, որոնք մատնացույց են անում անցյալը, այս մեկում գերակշռում են ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ, որոնք ցույց են տալիս ներկան: Երկուսն էլ գործ ունեն «սուրբ պատերազմ» կամ «Աստված որպես պատերազմող» գաղափարի հետ: ՅԱՀՎԵՆ է (կամ Նրա անունը, Սաղմ. 44:5,8) Իսրայելի հաղթանակների աղբյուրը, ոչ թե նրանց գործը:

**44:4 «Դու ես իմ Թագավորը»** ՅԱՀՎԵՆ որպես թագավոր հավանաբար գալիս է 1 Թագ. 8:7-ից: Իսրայելացի թագավորը միայն ՅԱՀՎԵԻ երկրավոր իշխանության և թագավորության ներկայացուցիչն էր (տես՝ Ես. 24:23, 52:7, Սաղմ. 93:1, 96:10, 97:1, 99:1): Հրեական գրականության և ծեսերի մեջ ՅԱՀՎԵՆ կոչվում է «Տիեզերքի Թագավոր»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՈՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

❖ «Հակոբի համար ազատագրումներ հրամայիր» Սա ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ է (BDB 845, KB 1010, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ):

«Հաղթանակներ» բառը բառացի նշանակում է «փրկություն՝ ազատագրումներ» (BDB 447): ՀԿ-ում այն նշանակում է ազատագրում ֆիզիկական խնդիրներից և թշնամիներից:

Հնարավոր է, որ *Էլրհիմի* վերջին տառը կապվի հաջորդող բառի հետ՝ այն դարձնելով «Իմ Հրամանատար» (AB, էջ՝ 265), որը համագոր է «Իմ թագավոր»-ին: AB կարծում է, որ հաջորդ արտահայտությունը պետք է լինի զուգահեռ վերնագիր՝ «Հակոբի փրկիչը»:

❖ «Հակոբի համար» Սա ակնարկ է նահապետներին ՅԱՀՎԵԻ կողմից տրված խոստումներին (այսինքն՝ Աբրահամին, Իսահակին, Հակոբին, տես՝ Ծննդոց 12-35): ՅԱՀՎԵՆ ունի հավիտենական հայտության, փրկագործության նպատակ ամբողջ աշխարհի համար, որում Իսրայելը և Հակոբը հանդիսանում են կարևոր անձիք:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

**44:8** Ուշադրություն դարձրեք Սաղմ. 44:8-ի զուգահեռականությանը՝

1. պարծենում էին – գոհություն էին տալիս
2. ամբողջ օրը – հավիտյան

❖ «Սեյա» Տես Սաղմոսների Ներածություն, VII և Սաղմ. 3:2-ի գրառումը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 44:9-16**

<sup>9</sup>Սակայն մեզ մերժեցիր ու խայտառակեցիր

Ու չեղար մեր գորքերի հետ:

<sup>10</sup>Թշնամուց մեզ հետ դարձրիր,

Ու մեզ ատողները մեզ կողոպտեցին:

<sup>11</sup>Մեզ ոչխարի պես ուտվելու տվիր

Ու հեթանոսների մեջ ցրեցիր:

<sup>12</sup>Քո ժողովրդին չնչին գնով ծախեցիր՝

Նրանց գնով չհարստացար:

<sup>13</sup>Մեր դրացիների առջև մեզ նախատինք դարձրիր՝

Մեր շուրջբոլորը գտնվողների առջև ծաղրուծանակի առարկա,

<sup>14</sup>Մեզ հեթանոսների մեջ ծաղրանքի նյութ դարձրիր

Ու ժողովուրդների մեջ գլուխ օրորելու պատճառ:

<sup>15</sup>Ամեն օր իմ առջև է իմ նախատինքը,

Ու երեսիս ամոթն է ծածկում ինձ՝

<sup>16</sup>Նախատողի ու հայհոյողի ձայնից,

Թշնամու և վրիժառուի երեսից:

**44:9-16** Այս պարբերությունը Սաղմ. 44:1-3 և 4-8-ի բացարձակ հակադարձումն է: Իսրայելի համար ՅԱՀՎԵԻ պատերազմելու փոխարեն (այսինքն՝ 44:9բ, Սաղմ. 60:10, 108:11), Նա պատերազմում է նրանց դեմ: Ստույգ չի նշվում թե ինչու, սակայն խնդիրը ուխտի անհնազանդություն էր և դրա հետևանքները (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30):

Ահավոր հետևանքները պարզապես ռազմական պարտությունը չէր, այլ գերությունը, ստրկությունը, նվաստացումը:

**44:9 «մեզ մերժեցիր»** Այս ԲԱՅԸ (BDB 276, KB 276, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) հաճախ է օգտագործվում Սաղմոսներում, որտեղ ՅԱՀՎԵՆ մերժում է Իր ուխտի ժողովրդին (տես՝ Սաղմ. 44:9,23, 60:1, 10, 74:1, 77:7, 108:11): Պատճառը, թե ինչու, մեծ հարցն է:

1. ուխտի անհնազանդությունը (այսինքն՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30)
2. ՅԱՀՎԵԻ հետ նրանց փոխհարաբերությունը (այսինքն՝ Հոր, Սաղմոս 73, Ամբակում)
3. օրհնությունների հետ կապ չունեցող նրանց հավատարմությունը ստուգելը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ):

Այս Սաղմոսը չի պատասխանում այս հարցին, եթե Սաղմ. 44:22-ը չի հանդիսանում ամբողջ Սաղմոսի բանալի խոսքը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 44:17-19**

<sup>17</sup>Այս ամենը մեզ վրա եկավ, սակայն մենք Քեզ չմոռացանք

Եվ Քո ուխտը չդրժեցինք:

<sup>18</sup>Մեր սրտերը հետ չդարձան,

Ոչ էլ մեր քայլերը Քո ճանապարհից շեղվեցին.

<sup>19</sup>Թեև վիշապների եղած տեղում մեզ փշրեցիր

Ու մահվան սավերով ծածկեցիր:

**44:17-19** Այս պարբերությունը փորձ է պատասխանատվություն ստանձնելու: Իսրայելը պնդում է իր անմեղությունը:

1. մենք չենք մոռացել Քեզ
2. մենք Քո ուխտը չդրժեցինք
3. մեր սրտերը (հավաքական) հետ չդարձան
4. մեր քայլերը Քո ճանապարհից չշեղվեցին

Անմեղության այս հայտարարությունը շարունակվում է հաջորդ պարբերության մեջ էլ (տես՝ Սաղմ. 44:20-22): Մա կարող է ճիշտ լինել որոշ իսրայելացիների համար, բայց ոչ մեծամասնության, նրանց պատմության մեծ մասի համար (տես՝ 2 Օրինաց 32, Սաղմոս 78, Նեեմիա 9):

Սաղմոս 44:9 աստվածաբանորեն նման է Հոբին, որտեղ նա կամենում էր Աստծուն մեղադրել, որպեսզի իր դատը շահի: Սաղմոսերգուն մեղադրում է Աստծուն իրենց դեմ անարդարությամբ վարվելու համար:

Այլ մեկնաբանության համար տես Դերեկ Քիդներ, Թինդեյլ ՀՎ-ի Մեկնաբանություններ, հատոր 15, էջ՝ 185-186:

**44:17 «Քո ուխտը»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

**44:19**

**NASB, NKJV, NRSV, NJB  
JPSOA, REB**

**«շնագայլեր»  
«ծովահրեշ»**

Այս երկուսի միջև տարբերությունը մի բաղաձայն է:

1. շնագայլեր – BDB 1072, שׁוֹרֵף
2. ծովահրեշ – BDB 1072, יָמֵן

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 237) տալիս է «շնագայլեր»-ին “B” գնահատական (որոշ կասկածներ): JPSOA տալիս է Եզեկ. 29:3, 32:2 որպես գուգահեռ հատվածներ *tannin* (այսինքն՝ «ծովահրեշ», տես՝ Ծննդ. 1:21, Հոր 7:12) բառի համար:

Քանանացիների գրականությունից անապատային գագանները հաճախ գործածվում են որպես փոխաբերություն ազգի դիվական ուժերի համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆՆԸ ՀԿ-ՈՒՄ, տես՝ Եսայի 13:21-22, 34:11-15, Երեմ. 9:11, Միքիա 1:8, Սոփ. 2:14):

❖ «մահվան սովերը» Տես Սաղմ. 23:4-ի գրառումը: ՅԱՀՎԵՆ թողել է Իր ուխտի ժողովրդին հեթանոս կրոնների և մահվան իշխանության դիվական ուժերին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 44:20-26**  
**20** Եթե մոռացել ենք մեր Աստծո անունը  
**Կամ մեր ձեռքերը դեպի օտար աստված ենք պարզել,**  
**21** Մի՞թե այս բանը Աստված երևան չի հանելու,  
**Քանի որ Նա գիտի սրտի գաղանփքները:**  
**22** Հիրավի, ամեն օր Քեզ համար սպանվում ենք,  
**Մորթվելու ոչխարներ ենք համարվում:**  
**23** Չարթնի՛ր, ո՛վ ՏԵՐ, ինչո՛ւ ես քնում .  
**Ելի՛ր, մի՛ մերժիր մեզ հավիտյան:**  
**24** Ինչո՛ւ ես թաքցնում դեմքդ,  
**Մոռանում ես մեր նեղությունն ու տառապանքը:**  
**25** Քանի որ մեր անձը ծովեց մինչև հողը,  
**Մեր փորը գետնին դիպավ:**  
**26** Ելի՛ր, օգնի՛ր մեզ, ու ազատի՛ր մեզ հանուն Քո ողորմությունների:

**44:20** Սա կռապաշտության յուրահատուկ ուրացում է: Նրանք հայտարարում են, որ եթե կռապաշտ են եղել, ՅԱՀՎԵՆ հաստատ կիմանար (Սաղմ. 44:21, տես՝ Սաղմ. 7:9, 17:3, 26:2, 66:10, 139:23, Երեմ. 11:20, 17:10, 20:12):

❖ «մեր ձեռքերը պարզել ենք» Սա բառացիորեն «տարածվել» է (BDB 831, KB 975, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Սա երկրպագության ֆիզիկական ժեստ էր, սովորաբար արտահայտում էր աղոթք (տես՝ Ելից 9:29, 2 Մնաց. 6:12, Եզրաս 9:5, Հոր 11:13, Սաղմ. 28:2, 88:9, 134:2, 141:2, 143:6, Ողբ 2:19), սակայն կարող էր ընդգրկել որոշ տեսակի գոհերի մատուցումը (այսինքն՝ բարձրացնելը. խունկ, բանջարեղեն, գինի):

**44:22** Սա Սաղմ. 44:19-ի պես հայտարարություն է, որ ՅԱՀՎԵՆ թողել է Իսրայելին (տես՝ UBS *Չեռնարկը*, էջ՝ 409): Պողոսն այս տերմինը կիրառում է Հռոմ. 8:36-ում և կարծես թե մատնանշում է, որ Աստծո ժողովուրդը առերեսվելու է այս ընկած աշխարհում խնդիրների հետ, սակայն Նա նրանց հետ է և նրանց համար: Ոչինչ չի կարող բաժանել մեզ Աստծո սիրուց Քրիստոսի մեջ (տես՝ Հռոմ. 8:38-39):

❖ «Քեզ համար» Ոմանք այս խոսքը դիտարկում են որպես այս Սաղմոսի աստվածաբանական առանցքը: Աստծո ժողովուրդը հավածվում են ոչ թե իրենց մեղքի պատճառով, այլ Նրա հետ իրենց ունեցած փոխհարաբերության: Այս դրդապատճառը հստակ երևում է Հիսուսի կյանքում:

Միայն թե ես վստահ չեմ, թե կա բավարար տեքստային ապացույց այս Սաղմոսից, որպեսզի կատարենք այս հայտարարությունը:

**44:23-26** Սա դիտարկվում է որպես առանձին պարբերություն NKJV, NRSV տարբերակների կողմից: Այստեղ առկա է մի շարք աղոթքի խնդրանքներ (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և ՀԱՅՑԱԿԱՆ):

1. զարթնի՛ր, Սաղմ. 44:23 – BDB 734, KB 802, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 7:6, 35:23
2. ելի՛ր – BDB 884, KB 1098, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 35:23
3. մի՛ մերժիր մեզ հավիտյան – BDB 276, KB 276, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 77:7
4. ելի՛ր – BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 3:7, 7:6, 9:19, 10:12, 17:13, 74:22, 82:8, 132:8



5. ազատի՛ր մեզ – BDB 804, KB 911, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 25:22, 130:8 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ):

**44:23 «ո՛վ ՏԵՐ, ինչո՛ւ ես քնում»** Սա մարդաբանական փոխաբերական արտահայտություն է (տես՝ Սաղմ. 78:65): ՅԱՀՎԵՆ (այստեղ *Adonai*) չի քնում (տես՝ Սաղմ. 121:4), սակայն երբեմն, Իսրայելի մեղքի պատճառով, Նա կարծես թե հեռանում է նրանց հետ փոխաբերությունից (տես՝ Սաղմ. 44:24-25):

Լավ, համառոտ քննարկման համար տես՝ *Աստվածաշնչի խորթին խոսքերը*, «Արդյո՞ք Աստված քնում է» (էջ՝ 268-269):

❖ **«մի՛ մերժիր մեզ հավիտյան»** «Հավիտյան» խոսքը հաղորդակցությունը նկատի ունեցող ևս մեկ դարձվածք է (տես՝ Սաղմ. 103:9): Այն հավիտյան էր թվում նրանց համար: Բայց դա պարզապես չհաղորդակցվելու մի շրջան էր, որպեսզի ապաշխարություն ծներ և վերականգներ երկարաժամկետ հաղորդակցության համար:

**44:25** Սա աղոթող մարդկանց նկարագրություն է՝ լինի դա ծունկի եկած, թե գետնին խոնարհված՝ պառկած: Սա աղոթքի անսովոր դիրք էր, որը սովորաբար կանգնած դիրքն էր՝ ձեռքերը վեր պարզած և աչքերը բաց, վեր նայելով: Սողոմոնը աղոթեց իր ծնկների վրա (տես՝ 2 Մնաց. 6:13), Դանիելը աղոթում էր ծնկի իջած (տես՝ Դան. 6:10), Հիսուսը Գեթսեմանում աղոթեց Իր երեսի վրա ընկած (տես՝ Մատթ. 26:39): Սա ջերմեռանդություն արտահայտող միջոց է:

**44:26 «հանուն Քո ողորմությունների»** ՅԱՀՎԵՆ գործում է՝

1. նրանց հայրերի հանդեպ Իր ունեցած սիրո համար (այսինքն՝ Նահապետների)
2. նրանց հայրերին տված Իր խոստման համար
3. Աբրահամի հետ Իր ունեցած ուխտի ավելի մեծ նպատակի համար (տես՝ Ծննդ. 12:3, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):
4. Իր ուխտի հավատարմությունը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED) Իր խոսքին (տես՝ Սաղմ. 6:4, 109:21, 26, 119:149):

Իսրայելի բարության համար չէր այս ամենը (տես՝ 2 Օր. 9:4-6, Եզեկ. 36:22-38):

### **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ԾՆՈՐՀՔԻ ԳՈՐԾԵՐԸ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՆԴԵՊ SPECIAL TOPIC: YHWH'S GRACE ACTS TO ISRAEL**

Պետք է հստակ ասել, որ Ելիցը, Անապատի Դեզերումը և Նվանումը, ՅԱՀՎԵԻ կողմից շնորհքի գործեր էին (այսինքն՝ Ծննդ. 15:12-21), որ թե դրան արժանացած պարզևներ՝ Իսրայելի գործերի համար.

1. «Հայրերի» հանդեպ ՅԱՀՎԵԻ ունեցած սերն էր – 2 Օր. 4:37-38, 7:8, 10:15 (այսինքն՝ Նահապետները)
2. Իսրայելի թիվը չէր – 2 Օրինաց 7:7
3. Իսրայելի գործությունն ու ուժը չէր – 2 Օրինաց 8:17
4. Իսրայելի արդարությունը կամ շիտակությունը չէր – 2 Օրինաց 9:5-6
5. ՅԱՀՎԵՆ շարունակում է սիրել Իսրայելին անգամ դատաստանի մեջ – Երեմ. 31:3

Պետք է ավելացնել, թե որքան հաճախ է Իսրայելը նկարագրվում որպես «համառ» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՄԱՌՈՒԹՅՈՒՆ): ՅԱՀՎԵԻ ողորմությունը և շնորհքը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏՈՒ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)) ընդգծվում են Իր ուխտի ժողովրդի կողմից պարբերաբար կրկնվող անհնազանդության և կռապաշտության ֆոնի վրա:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Իրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Այս Սաղմոսում ուխտի ո՞ր կողմն էր հարցադրված:
2. Ի՞նչ է սովորեցնում այս Սաղմոսը Իսրայելի քաղաքական կառույցի մասին:
3. Ինչո՞ւ էր Իսրայելը պարտվել:
4. Ինչո՞ւ են Աստծուն խնդրում, որ պատասխանի: